



Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի

2021թ. մայիսի 20-ի թիվ 5 նիստում

ԳՊՀ ղեկավար՝

Ռ. Հակոբյան

«20» մայիսի 2021թ.

Գավառի պետական համալսարանում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգ

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ԳՊՀ ՄԿԾ վերջնարդյունքների, ծրագրի բովանդակության, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դասընթացներին հատկացվող կրեդիտների քանակի փոխկապվածությունը՝ ապահովելով կրեդիտների փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի առանցքային պահանջները, ԳՊՀ շնորհած կրեդիտները բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ճանաչելի դարձնելու նպատակով:
2. Կրեդիտը սահմանվում է որպես կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող լրիվ աշխատաժամանակի չափման պայմանական միավոր: Դասընթացի, մոդուլի կրթական վերջնարդյունքները և կրեդիտները փոխկապակցված են:
3. ԳՊՀ-ում կրթական վերջնարդյունքներով, ակնկալվող իրազեկություններով, դրանց հասնելու համար սովորողներից պահանջվող աշխատաժամակալով պայմանավորված և կրեդիտներով արտահայտված ՄԿԾ-ների մշակումը բազմափուլ գործընթաց է՝ միտված որակյալ կրթության կազմակերպմանը, մրցունակ մասնագետների պատրաստմանը:
4. Կրթական վերջնարդյունքներով պայմանավորված ՄԿԾ-ների մշակման գործընթացի հաջորդական փուլերն են.
 - 1) ՄԿԾ-ի մասնագիտական ուղղվածությամբ պայմանավորված՝ ծրագրի նպատակների սահմանումը,

- 2) ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների կազմի որոշումը՝ համաձայն Որակավորումների եվրոպական, ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչների,
 - 3) ՄԿԾ-ի շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունների սահմանումը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի համապատասխան ոլորտի պահանջները,
 - 4) գործատուների կողմից պահանջվող մասնագիտական իրազեկությունների նկարագրությունը,
 - 5) ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների՝ դասախոսական և օժանդակ կազմերի, ենթակառուցվածքների, ուսումնառության ռեսուրսների, օժանդակ ծառայությունների և այլ պայմանների ապահովումը,
 - 6) ՄԿԾ-ի կառուցվածքի և բովանդակության ձևավորումը՝ ուսումնական պլանի, դասընթացների, մոդուլների մշակումը՝ համաձայն սահմանված կրթական վերջնարդյունքների,
 - 7) դասընթացներին հատկացվող կրեդիտների սահմանումը՝ համաձայն կրթական վերջնարդյունքներին հասնելու համար ուսանողի կողմից պահանջվող աշխատածավալի,
 - 8) ՄԿԾ-ի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը գնահատելու ձևերի և չափանիշների մշակումը,
 - 9) ակնկալվող կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակումը,
 - 10) ՄԿԾ-ի մշակման և իրականացման որակի գնահատման, որակի ապահովման և շարունակական բարձրացման համակարգի ներդրումը՝ հետադարձ և առաջանցիկ կառուցակարգերի կիրառմամբ:
5. Դասընթացի, ուսումնական մոդուլի մշակման գործընթացի հաջորդական փուլերն են.

- 1) դասընթացի, ուսումնական մոդուլի նպատակների սահմանում՝ դրանք բխեցնելով ՄԿԾ-ի նպատակներից,
- 2) կրթական վերջնարդյունքների ձևակերպում,
- 3) կրթական վերջնարդյունքներով պայմանավորված գնահատման շեմային չափանիշների սահմանում,
- 4) գնահատման մեթոդների, գիտելիքների նվազագույն շեմի բավարարումը ստուգելու ձևերի ընտրություն, ինչպես նաև ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ գնահատումների համար նկարագրիչների սահմանում,
- 5) դասավանդման և ուսումնառության արդյունավետ մեթոդների մշակում և կիրառում, որոնք սովորողներին հնարավորություն կտան ձեռքբերելու ակնկալվող կրթական վերջնարդյունքները,

6) ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդների քարտեզագրում ակնկալվող կրթական վերջնարդյունքների հետ,

7) դասընթացի, ուսումնական մոդուլի բովանդակության մշակում:

6. Դասընթացի ավարտին սովորողին շնորհվում է կրեդիտ, եթե նա ձեռք է բերել պլանավորված վերջնարդյունքները:

7. ԳՊՀ-ում ընդունվում են ECTS համակարգում ընդունված ներքոհիշյալ նորմերը.

1) 1 ECTS կրեդիտը համարժեք է 30 ակադեմիական ժամի,

2) 1 շաբաթվա բեռնվածությունը համարժեք է 1,5 ECTS կրեդիտի կամ 40-45 ժամի,

3) 1 ուսումնական տարվա համար ուսանողի լրիվ բեռնվածությունը կազմում է 60 ECTS կրեդիտ, որը համարժեք է 1800 ժամի:

8. ԳՊՀ-ում ընդունվում են՝ ըստ կրթական աստիճանների Որակավորումների ազգային շրջանակում սահմանված հետևյալ կրեդիտները.

4) Բակալավրիատում ընդհանուր՝ 240 կրեդիտ,

5) Մագիստրատուրայում ընդհանուր՝ 120 կրեդիտ,

6) Ասպիրանտուրայում ընդհանուր՝ 180 կրեդիտ:

9. Դասընթացներին կրեդիտներ հատկացնելիս՝ հիմք է ընդունվում, թե որքան ժամանակ կպահանջվի միջին սովորողից ակնկալվող կրթական վերջնարդյունքները ձեռքբերելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածը միարժեքորեն չի կարող որոշվել, քանի որ այն կախված է սովորողի ընդունակություններից, նախնական գիտելիքների մակարդակից, անհատական այլ տվյալներից, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետությունից, ուսումնական գործընթացների կազմակերպման որակից, պարապմունքների անցկացման ձևերից, ակադեմիական խմբի մեծությունից, ուսուցման օգտագործվող տեխնոլոգիաներից և այլ գործոններից:

10. Դասընթացի աշխատածավալը որոշելու և կրեդիտներ հատկացնելու հաշորդական փուլերն են.

1) դասընթացի ուսումնական մոդուլների կազմի սահմանումը,

2) նախատեսվող կրթական գործողությունների պլանավորումը և դրանց կատարման համար ուսանողից պահանջվող աշխատաժամանակի որոշումը,

3) մոդուլների աշխատածավալների ճշգրտումը՝ ուսանողական հարցումների արդյունքների հաշվառմամբ:

11. ՄԿԾ-ների ուսումնական պլաններով նախատեսված այլ կրթական մոդուլներին կրեդիտներ հատկացվում են 1 շաբաթը՝ 1.5 կրեդիտ հաշվարկով, հետևյալ սկզբունքով.

1) Մագիստրոսական թեզի, ավարտական աշխատանքի կատարման համար տրվում է 8 շաբաթ ժամանակ, ուստի $8 \times 1.5 = 12$ կրեդիտ,

2) Կուրսային աշխատանքի կատարմանը տրվում է 2 շաբաթ ժամանակ, ուստի $2 \times 1.5 = 3$ կրեդիտ,

3) Եթե պրակտիկայի տևողությունը 6 շաբաթ է, ապա պրակտիկային տրվում է $6 \times 1.5=9$ կրեդիտ:

12. Դասընթացին հատկացող կրեդիտները հաշվարկվում են հետևյալ ձևով.

Կրթական ծրագրի անվանումը՝			
Դասընթացի անվանումը՝			
Դասընթացի տեսակը՝ մասնագիտական/լրացական/ընտրովի			
Դասընթացի մակարդակը՝ բակալավրի/ մագիստրոսի/ հետազոտողի			
Նախապայմանները՝			
ECTS կրեդիտների քանակը՝ 5 ECTS (ուսանողի միջին աշխատաժամանակը՝ 150 ժամ)			
Ձևավորվող կրթական վերջնարդյունքները	Կրթական գործողությունները	Ուսանողի հաշվարկային աշխատաժամանակը (ժամ)	Գնահատումը
Կրթական արդյունք-1	Կրթական գործողություն 1.1	8.5	Գրավոր աշխատանքի ներկայացում 30%
	Կրթական գործողություն 1.2	12.5	
	Կրթական գործողություն 1.3	6.5	
	Կրթական գործողություն 1.4	14.0	
	Կրթական գործողություն 1.5	11.5	
Կրթական արդյունք-2	Կրթական գործողություն 2.1	3.5	Բանավոր լսարանային զեկույց 20%
	Կրթական գործողություն 2.2	15.5	
	Կրթական գործողություն 2.3	6.0	
	Կրթական գործողություն 2.4	9.5	
Կրթական արդյունք-n	Կրթական գործողություն-n.1	12.5	
	Կրթական գործողություն-n.2	4.0	

	Կրթական գործողություն-ն.3	5.5	Գրավոր քննություն 50%
	...		
	...		
Ընդամենը		150	100%